բեցընէին վարժապետք իրենց ուսանողաց. գիտնալով որ առանք են հիմունք աւրիշ ամէն սովրելու ուսմանց ամէն տեսակ վիճակի մարդու, և պիտոր ըլլան կանոն բոլոր իրենց կենաց ընթացքը մէջ,,։

Որոնեալ ծերը լսելով զայս ամէն բանաձներս, զարմանք չէր յուսար ինձմէ լսելու, կուրախանար և չէր գիտեր թէ ինչպէս շնորհակալ ըլլայ ինձմէ։ Բայց ես աւելի մեծ շնորհակալութիւն կ'ընէի մեր ազգայնոց, եթէ ամէնքը այս ճշմարտութեան համբուն հետևելով աշխատէին կարգաւորեալ կերպով զիրար լուսաւորելու, և ցուցընէին իրենց ամէն գործոցը մէջ զայս կանոնաւոր մտաց ազատութիւնը, որով վայելէինք ազգովին ասկից առաջ եկած ամէն տեսակ լուսաւորութեց արդիւնքը։

Հ. Պ. Մ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲՈՂ

ՑԵՐԱՆԵԼԻ ԵՐԷՑՆ Ի Ս. ՂԵՒՈՆԴ [1]

ՄԱՄՆ Բ.

Ամենախնամ կամք բարձրելոյն հաճեցան սփոփել զաշխարհ Հայաստան, և յանհնարին վշտացն հանգուցանել զնա. այլ ով գաղտնածածուկ խորհրդոցն Աստուծոյ, զի որպէս կանխեալ ասացի, զի մի փրկութիւն հայրենի աշխարհիս այլոց զօրութեան համբերեցին արգասիք՝ հարկ եղև տապալել անկանիլ 'ի ճակատու յեռին մարտին՝ այնմ որ հիմն և զօրութիւն տանս համարէր Թորգոմայ, առաքինւոյ տեառն Միամիկոնեան սպարապետին. սակայն ով անհնարին ազէտից մերոց, և քեզ Հայր, երանելիդ Ղևոնդ, ով փառքդ և պարծանք Հայաստանեայց, ով ապաւէնդ հպատահարելոյ ժողովրդեանն, ով նեցուկդ տանն Աստուծոյ, և քեզ... ահ, և միթէ ջոյգ հնար զայս մի նուազ զվճիռ Խարձրելոյն շրջել, զի և քեզ հարկ է նուիրիլ 'ի վերայ ազգին զի փրկեսցի Հայաստան. սերմն խնդրէ Աստուած զի նորաբողբոջ զկենդանութիւն բուսուսցէ Հայաստան աշխարհիս, և ահա երանելին Ղևոնդ ինքնանուէր սերմն կենդանութեան խոնարհի 'ի հող. նուէր քաւութեան խնդրէ Աստուած, զի զարտասուս դառնութեամբ սրբեսցէ յաչաց Հայաստան աշխարհիս, և ահա մերս Հայր Հայաստանեայց մատչի 'ի սեղան քաւութեան. այլ ահ և յորպիսի սեղան. 'ի սեղան քստմնելի յաչս ազամանդեայ և ապառաւում սրբոտից անգամ, այլ 'ի փարելին յաչս երկնից, 'ի շնորհազեղն հայրենի սահմանացս։ Բաբէ, յուզին տարտարոսք, ժայթքեն 'ի դուրս զամենայն գաղտաձիգ մեքենայս չարութեան մտաց, զրոհ տուեալ յարձակին 'ի պաշտօնեայն սրբութեան յերանելի երէցն. նա ինքն ինասուց արեաց արքայի դատի պատճառք. վկայեն և արքունիք դիցամոլ ազգաց, զի այր մի յաչս նոցա անարգ՝ կանգուն ունի զՀայաստան աշխարհ. վկայեն զի նա մենաւոր և անզէն՝ ոգի պահպանութեան եղեմական վայրացն. զի նա հաղարաւորաց նոցա ախոյեան կայ անվանելի։ Այլ ահա ո՞չ նոքա յաղթողք 'ի դաշտն Արտազու հանդիսացեալք, և հիմ իբրու զկորակոր պարտեալս այր զարամբ ելեալ խռովին, յուզեալք յանձինս տարուբերին, զի դեռ ևս կենդանի կայ նեցուկն աշխարհի, դեռ ևս 'ի Հայաստան բաղդն նորա. այո՛ հաղարաւորք տարածեալք 'ի դաշտին, այլ զՀաղարաւորացն զոգիս այր իւրաքանչիւր յանձն գումարեալ ինչէ զշունչ անհնարին. լքան յաղթականք, և զի յարութեան հանդիսի տեղի տուեալ պարտեցան՝ զնենգութիւն վատ ընդ արութեամբ քաջութեան անարգաբար փոխանակեալ՝ սուտ երդմամբք հնարին ընկճել զաշխարհն։ — Այլ

[1] Տես երես 210։

զինչ տեսանեն աչք իմ, 'ի շղթայս պա-
րաւանդեալ և երանելին Ղևոնդ, և
'ի գրկաց կորզի հայրագորով որդւոց.
ա՜հ, հա՛յր հա՛յր կառքդ հայաստան աշ-
խարհիս և հեծեալքնորա, և դու լքեալ
թողուցուս զգաւառդ հայրենի... Ոչ-
ինչ նուազ որպէս աստ զհայրենասէր
ոգիս, և անդ զժողովուրդն համբրէն
պատեցին տագնապք անհնարինք և
ցաւք դժոխրմբերք. գալարեցան աղիք
և երանեալ առնն Յ՚ստուծոյ, և մինչև
զոտս արտաքս քան զհայաստանեայց
սահմանն եդեալ՝ գամ մի ևս ակնար-
կեալ 'ի հայրենիսն՝ ձայն զայս մխիթա-
րութեան սգատեսակ որդւոցն արկա-
ներ. "՝Լուեր քաւութեան, զոհ փրկու-
թեան խնդրէ Յ՚ստուած 'ի հայաստա-
նեայցս աշխարհէ, և ես ողջակէզ
տեառն գնամ նուիրել զանձն իմ բո-
վանդակ ընդ ձեր փոխան, որդեակք
իմ, ժողովուրդ ասքանազեան, և ընդ
քեզ ո՛վ օրհնեալ գաւառդ իմ հայրե-
նի ,,. լռեաց ոգին աստուածեղէն, լը-
ռեցին և նուագք խնդութեան հայաս-
տան աշխարհիս։

Որ աննախանձ վարձս և շնորհս բիւ-
րապատիկս ընդ միոյ կշռէ Յ՚ստուած
գործոց մարդկան, և որում մերկապա-
ղանոց կան ամենայն խորհուրդք մահ-
կանացուաց, և որ 'ի հանդիսի անցեալ
կայ առաքինի մրցանաց իւրոցն ծա-
ռայից, ընդ երանելոյն Ղևոնդեայ գե-
ղագոյն մրցանացն՝ և գերագոյն սէր փո-
խարինի և անթառամելի պսակս հան-
դերձեր նմին։ Յ՚այլ աստէն քանի տար-
օրինակ պարզին ինձ հանդէպ տեսա-
ցանք, ա՜հա հայրն հայաստանեայց աշ-
խարհիս շղթայք յոտս՝ 'ի խորս ներքինս
խաւարչուտ քանտից պրկեալ դնի, ոչ
ևս զոք առ նմա տեսանեմ բաց յոմանց
պաշտօնեիցն Յ՚ստուծոյ. այլ իմ մտաքս
ածեալ անդր և հուպ 'ի վայրն մերձե-
ցեալ ուր երանելին դնի Ղևոնդ, 'ի
տեսիլ առնն Յ՚ստուծոյ զսրմանք և
հիացումն ունին զիս. ահա տեսանեմ
զի որ 'ի շղթայս պարաւանդեալ կայ
անգանօր՝ սիրելին երկնից է և սիրոյն
Յ՚ստուծոյ նշաւակ. Յ՚ստուած զծառայ
իւր զպաշտօնեայն հաւատարիմ, հան-
դերձ դասուն իւրոյ սրբութեան փակէ
ընդ ձեռամբ խուժ ազգին, լրումն ան-
քննելի խորհրդոցն, առ ժամանակ մի
իբրև 'ի պահեստ աւանդէ պարտաւոր
ծառայից իւրոց զսիրելիս իւր, մինչ զի
և շղթայիցն անգամ նոցա պատկառելիս
զնոսին կացուցանել, մինչև տագնապիլ
նոցա ընդ միմեանս եթէ զինարդ չմար-
թին խոնարհել զնոսա 'ի հաճոյս իւ-
րեանց, և բուռն իմն աներևոյթ զօրու-
թեամբ ձգեալք բռնադատին սպասար-
կու անգամ կապելոց իւրեանց լինել. և
յիրաւի զի որ խտրէն ընդ աւագն և
ընդ անաւագ՝ սրբափայլ առաքինու-
թիւնն ևեթ է, և անբիծն քաղաքավա-
րութիւն. քանզի որք ըստ դիպաց իմն
յաւագութիւնս ամբարձեալք և 'ի
պատմուճանացն սրբութեան իցեն մեր-
կացեալք՝ ապերջանիկք քան զհպատա-
կացն վարեն զկենցաղ, և բազում ան-
գամ յակամայս իսկ ստիպին առաքի-
նութեանց հպատակացն տեղի տալ, զի
Յ՚ստուած որ աւագաց և անաւագաց
միանգամայն բազմի տեր 'ի բարձունս,
զառաքինութիւն ևեթ և զսրբութիւն
յաղթական և տեր կնքեաց 'ի մարդիկ։
Այլ զի երջանիկն կենաց կենցաղ ան-
դորրաւէտ՝ առ թշուառութեամբ յայտ-
նագոյնս գայ 'ի տեսիլ, որպէս և արե-
գականն և լուսոյ չքնաղագոյն ձիրք
յայնժամ մանաւանդ անձկալի մարդ-
կան լինել, յորժամ տակաւ 'ի լուսոյն
նուազեալ աղջամուղջն գիշեր պատի
զերեսօք երկրի, սոյնպէս և արեգակ-
նափայլ երկնայինն կենցաղ երանելոյ
երիցուն և չքնաղ ոգի նորա ազգասէր
և ևս փայլեալ շողս արձակէր պայծա-
ռութեան՝ յորժամ պժգալին չարութիւն
և ազգատեաց բարոյից դառնութիւն 'ի
նոյն յասպարէզ ճակատեալ երևէր։ Յ՚ս-
տանօր թէպէտ արիւն ազգակցութեան
զաղիս գալարեսցէ, և զարտասուս յա-
չաց քամեսցէ ընդ ողորմ բազդ տա-
ռապեալն Ղ՚ասակայ, այլ խրախուսե-
ցայց մատչիլ՝ հուպ 'ի վայրն ահաւոր,
յորում սրբութիւն յարկակից չարու-
թեան գտանի, և ազգասէր ոգի՝ ընդ

վատ ազգատեցութեան բնակակից. արտասուք հեղուն և յաչաց առնն Աստուծոյ և յաչաց ուրացելոյն Պասակայ. այլ քանի խտիր մեծ է ընդ արտասուս երկոցունցն, նա զաղէտս ազգին և չարչարակից ոսոխին ողբայ միանգամայն, իսկ սա առ մղձկելոյ դառնութեան սրբոյն յարտօսր լուծեալ. հառաչէ երանելին Պետրոս, և հառաչանացն ձայնք զԱստուծոյ ամէնողորմ կամաց զձիրս սիրեն յաշխարհ հայաստանեայց. հառաչէ 'ի հանդիպոյ և ուրացեալն Պասակ, և ձայնք հառաչանաց նորա՝ հառաչանք յուսահատութե՛ն, հառաչանք կատաղութեան որք զդժոխոցն ևեթ վառեն բորբոքեն զհուրն անշէջ. բիւրք բիւրուց օրհնեն զՊետրոս 'ի շղթայս պարաւանդեալ, և հաշարք հազարաց անէծս դառնութեան յիշխանական գլուխն կուտեն Պասակայ. լցան չափք մեղանացն, և զարդարադատ ցասմանն Աստուծոյ քամեաց եղկելին զբաժակն վրիժուց։ Տեսին ահագին պակոյց ըզնախարարեան գունդն հաւատացելոց, արդարութեանն Աստուծոյ հանդէս ահագին՝ յահ և յերկիւղ պաշարեաց զնոսա, ուղխօրէն այնուհետև գնային արտասուք, և զձեռս և զհայեցուածս 'ի յերկինս ամբարձեալ ողորմ հեծէին. և ո՞ այնպիսեաց լքելոյ սրտից մխիթար, ո՞ արտասուաթոր հեծեծանաց նոցին սփոփանք, եթէ ոչ դու մխիթարդ հայաստանեայց, սփոփանքդ համօրէն տառապելոյ ազգին, ով աստուածայինդ Պետրոս, երկնաւոր քաջամարդեղ շնորհացն գանձարան. ձայն ետ Պետրոս՝ ձայն մխիթարութեան, և զուարթացան ոգիք, բանտն նսեմ քաղցրացաւ նոցա քան զոսկիապատ ապարանս, և ողորմ գերութեանն հանգամանք քան զարքունի բարձս անձկաւէտ ևս յաչս նոցա երևէր, զձեռան 'ի յերկինս ձգեալ և աստուածաբուղխ բանիւքն բանայր իմն զերկնից դրունս առաջի մենացելոց նախարարացն, որոց հաւատոյ աչք զերկնից նկատեալ յանդիման զանպատմելին զփառս աբրահամայինս յասպարիզին մրցանաց. 'ի զուր այնուհետև մոգպետն ջանահնար լինի մեղկել զադամանդեայ ոգի երանելեացն. 'ի զուր մարմնաւոր կերակրոցն պակասութեամբ կարծէ իմն յաղթել որոց կերակուր բանքն Աստուծոյ և ըմպելի երկնաղեղ շնորհք Հոգւոյն սրբոյ. 'ի զուր անջատէ 'ի միմեանց մարմնով զմիացեալսն յօգիս սիրոյ և շնորհացն Աստուծոյ. 'ի զուր հնարի փակել զքահանայսն Աստուծոյ 'ի նեբքնատուն մի գէՀ և խաւարչտին որք հոգւովք և մտօք զտիւ և զգիշեր յերկնից սահմանս Ճեմեն զուարթագինք։ Իսկ նայ և մոգպետն ինքնին եթէ զիա՞րդ տոկան երանելիքն, և աքանչելի հանգամանաց հրաշիցն Աստուծոյ վկայեն դահիճքն անգամ, զի մարդոյ մահկանացուի այնպիսում ժուժել կենաց յանհնարիցն է. 'ի ձախողակ խորհուրդս տարուբերեալ մոլորութեանն առաջնորդ ինքնին կնքեր զդուռն բանդին, զի Աստուծոյ մեծամեծացն, և երանելեացն սրբութեան ոչ ևս երկբայութիւնք անկցին 'ի մէջ։ Այլ զիա՞րդ իցէ քեզ պաշտօնեայդ մոլորութեան, պարտել որոց հսկենն երկինք. հանդէս է այս բարձրելոյ աջոյն, և զի երկինք փակեցին զերանելին 'ի ձեռս քո, և կարծիցես ՀՈխանալ 'ի դոսա, արի՛ մերձեցիր 'ի վայրն սրբանուէր յորում օթևանին ծառայքն Աստուծոյ. ահա իբրև զարեգակն անշէջանելի պայծառացեալք լուսով՝ վառին սիրովն Աստուծոյ։ Պակնու մոգպետն 'ի տեսիլ սքանչելեացն, և զահի հարեալ դողան ոսկերքն ամենայն. անդ ուրեմն առատաձիր շնորհայն Աստուծոյ զեղանեին պարգևք յանձն մոգպետին, զուարթանայր 'ի հոգին, ծագեր լոյս 'ի խաւարեալ միտս նորա, և անձկանօք 'ի նեբքս ընթացեալ առնոյր զանձամբ զշղթայսն երանաւէտս՝ յորոյ աղբիւրք բղխին յաւերժական կենդանութեան, և կամովն հրաժեշտ տայր մեծութեանցն և փառաց և անշունչ կուռցն որք 'ի տարտարոսն առաջնորդէին նմին. յայնժամ խելամուտ յանձին լուրում լիներ եթէ սերն Աստուծոյ էր որ զուարթագին

զնահատական 'ի սպատեսակ բանդան պահէր. անդ երանելին Ղևոնդ յերկինս զՀայեցուածս նորին ուղղեալ յորդառատ բանիւքն քանայր առաջի նորա զասպարէզս երկնից, և անձառելեացն խոստմամբք իրախոյս տայր նորահաւատ առնն 'ի սէր անդր աստուածութեանն պատսպարել աներկիւղ։ Այնդաղատեցան ոգիք մոգպետին, արտասուօք լցան ականողիք և յերկինս 'ի վեր զաչսն կառուցեալ կայր 'ի հիացման մեծի. լուէր բերանն աստուածաբուղխ երանելւոյն Ղևոնդեայ, այլ դեռ ևս 'ի ձայն բարբառոյ պաշտօնէին սրբութեան հնչէն լսելիք մոգպետին։ Որանայր անդէն զահ և զերկիւղ դիցամոլ արքային, և ոչինչ զտանջանաց և զմահու ածեալ զմտաւ փութայր հանգուցանել զերկնանման վարդապետս իւր, և անդէն յապարանս իւր ժողովեալ զնոսա և զպատուական նախարարսն՝ սփոփէր զնոսա, և դիւրէր նոցա զվիշտս նեղութեանցն։

Տագնապեցան դժոխք ընդ գերահրաշ տեսիլն աստուածական, մախանք և բուռն կատաղութիւն հուր շնչեաց 'ի գունդն տարտարոսական. հապա յուղին պաշտօնեայք գարշելեացն. անդուստ և արքայիցն սրքայ կորսկոր 'ի մարտէն փախուցեալ շնչէ զշունչ յուսահատ դառնութեան. անդ ուրեմն և արքայք, քուրմք և ժողովուրդն յարձակին 'ի պաշտօնեայսն Աստուծոյ 'ի նոսա զդառնութեան սրտիցն թափել զվրէժս։ Ահա տեսանեմ խռով հարեալ 'ի քաղաքի. յարտաքնայարդար զուարթ դէմն դահճացն՝ սրտից նոցա մերկապարանոց չարութիւնն նկատեալ երևի. և զիաւրդ. յայդ վատութիւն խոնարհեսցին ուրեմն գոռոզացեալ գունդք թըշնամեացն. արեան նոցա ծարաւիք՝ ըզկեանս ծառայիցն Աստուծոյ փութան կարձել, զի և 'ի նոսա փառաւորեսցի Աստուած, զի և աղդ հեթանոսք արիական անյաղթ նահատակութեան զինուորացն Քրիստոսի իցեն վկայք։ Նահատակութիւն վասն սիրոյն Աստուծոյ. Ոչ այն և եթէ էր և իղձ երանելեացն սրբոց, նոյն և անձկութիւն ոգւոց նոցա, այն լրումն փափաքանացն.. և հիմ ապա աւետեաց ձայն նահատակութեանն յարտասուաթոր հառաչանս արկցէ զաստուածականն զտոհմ. առ ինչ գելուն ոգիք և երանելւոյն Ղևոնդեայ.. ահ հոսին, այո՛ հոսին արտասուք զի գորով խանդակաթ որդեկաց՝ նախարարացն ասեմ, զի ողորմ տեսիլ հեծեծանաց և յուսաբեկ լալեաց նոցա գելին զսիրտս հարցն առաքինեաց. նախարարքն յերկիր խոնարհեալ, և զոտիւք երանելեացն փարեալք լային անմխիթար զանջատումն 'ի նոցանէ։ Ընդէր հոյակապ արանցն և յիշատակք թշուառութեանց ազգին մերկացան յաչս նոցա. անդ ապա այս յետին նուագ ձեռս առ նոսա կարկառեալ, և զԱստուծոյ յերկիր Հայաստանեայց և 'ի ժողովուրդն Գորգոմական զանապատ գթութիւնն մաղթելով, օրհնեցին զնախարարսն, 'ի նոսա և զաշխարհն և զժողովուրդն համօրէն. և օրհնութեանցն ձայնք հանգուցին զաշխարհն 'ի վշտաց, զշղթայս զերծին ըզնախարարաց, և Աստուծոյ հաշտութեանն հնչեցին աւետիք։...

Այլ դաղտնեացն Աստուծոյ 'ի պաշտօնեայս իւր ընտրեալս ժամանակք, կաղմ՝ էին ողջակէզքն, հապա խուժեն դահիճքն արիւնարբուք 'ի բանտն, քարշեն զերանելիսն արտաքս 'ի քաղաքէն, ծածկել իմն հնարելով զաստեղսն լուսալիրս յերեսաց երկնից. թափէն 'ի նահատակսն առաքինիս պաշտօնեայքն դժոխոց զցասումն կատաղութեան իւրեանց, ներկանին ապառաժք յարենէ նոցա, հարուածք անհնարինք սնդուքեն ոգւոց երանելեացն վկայեն, վերքն պսակք առաքինութեանց նոցա փայլեն 'ի յանձինս արի զինուորացն. վաստակեալ պարտասին դահիճքն, և երանելեաց դեռ ևս ժիր կան ոգիք. տապնապին դատաւորք, և նահատակքն յանդորրութեան մեծի զերկնից կենացն ճառ առեալ և քարոզեն, աներկիւղ խօսին յատենի, մերկանան առաջի նոցա զատրուշանացն զՏրդեհմունս, և զպաշտօնէից կրակին զգանահարու-

թիւնս։ Ընդ և երանելի պարագլուխն առաքինեաց սուրբն Ղևոնդ արիաբար զնահատակութեան տարեալ 'ի գլուխ զհանդէս՝ լուսն տայր մեծի գործոյն յոր կարգեցաւ Յստուծոյ, կարկէ ըզպաշտօնեայս չարութեան, վանէ ըզմարտն, խորտակէ զմենքենայս, տանջանաց յաղթող, մահու յաղթական, պսակազարդ խոյանայ յերկինս, յահ և յերկիւղ՝ կորակոր և պարտեալ զգունդսն ոսոխացն յերկիր հարեալ։

Վաւ ո՛չ. ոչ յաղթեցան նոքա 'ի թշնամեաց իւրեանց, ահա դահիճքն արիւնարբուք, ահա դատաւորքն վրէժխնդիրք՝ և յանչունչ դիականց երանելեացն 'ի սարսափ մահու անկեալ դնին. ցուրտ մարմինքն անգամ տիրաբար պատգամն առ նոսա որոտան, զի որք Յստուծոյ բարձրելոյ իցեն պաշտօնեայք՝ երկինք հսկեն նոցա, և զաշխարհ և զտիեզերս 'ի սպասու ունին ծառայութեան։

Յհաւասիկ նեցուկն աշխարհիս, մըխիթարութիւնն հայաստանեայց, առաքինի պաշտօնեայն Յստուծոյ ոգին ազգասէր սուրբն և երանելին Ղևոնդ յերկրէ յերկնից գաւառս վերամբարձեալ. զերկնից յարկսն լուսալիրս զոր նշմարէիք՝ այն գաւառք են առաքինեացն և նահատակաց Յստուծոյ և ազգին. 'ի նոյն ասպարէզ մրցանաց ծառային Յստուծոյ, 'ի նոյն հանդէս նահատակութեան երանելւոյն Ղևոնդեայ աներևոյթ աչն բարձրելոյն առաջնորդեաց և ձեզ, ո՛ առաքինիք. ո՞չ և որմունք մենաստանիս, ո՞չ և արտաքին տեսակք առն իւրաքանչիւր զնոյն քարոզեն յունկն ձեր. հապա վառեսցի և 'ի ձեր լանջս ոգին Մխիթարայ՝ ոգին վսեմական սերնդոց նորա։

Յլիմ 'ի լուսն հասեալ հանդիսիս, երջանիկ զանձն իմ համարիմ, զի մարթ է ինձ յաւուրս հանդիսիս համարձակ և անկեղծաւոր սրտիւ զջանից և զուսումնասէր փութոյ աշակերտելոցս վկայել առաջի բոլորելոյ ակրմբիս, և մեծաց ակնկալութեանց ընծայել առհաւատչեայս զմանկտուոյս։ Յյո՛, ո՛ պատկառելի ակումբ, այո՛ 'ի վեր քան զհասակ 'ի վեր քան զկար իւրաքանչիւր նշմարէի շահատակեալ զոսա յուսումն գիտութեանց յընթացս տարւոյս. այր այր անձին տուեալ քաջալերս 'ի նոյն և զընկերսն խրախուսէր։ Ի զարգացումն և յօգուտ աշակերտելոցս նուիրեալ իմն սուղ աւուրք կենաց՝ թող մթագնեսցին, թող կարձեսցին, թո՛ղ ծախեսցին իսկ ամենևին, եթէ այնպէս ինչ զարգացման և օգտից խանդակաթ սիրեցելոյ փոքու գնդիս իցէ 'ի դէպ. զարիական նահատակութիւն առաքինեացս, և զգեղեցիկն յառաջադիմութիւն անձկացելոյ աշակերտացս շատ իսկ և ես անձինս փառս և պարծանս համարեցայց։

Հ. Ա. Ը.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Քաղաքոնիա. — Պարչելոնա։

Ալադալոնիա գաւառը, զորն որ Հռովմայեցիք Տարրակոնեան կ'անուանէին, Պանիոյ Թերակղզւոյն հիւսիսային արևելեան կողմը կ'ինայ։ Հին ատենը զանազան ազգեր կը բնակէին, որոնք կամաց կամաց Հռովմայեցւոց զինուցը տակ նուաճեցան։ Քրիստոսի Ե դարուն Ավ խսիգոթք Թագաւորութիւնին հոս հաստատեցին և Պարչելոնա քաղաքը իրենց Թագաւորանիստ քաղաքը ըրին։ Դայց Մաւրիտանացւոց յարձակմանը ժամանակ քիչ մը ատեն Ամիրայից իշխանութեանը տակ մնալէն վերջը, Մեծին Կարոլոսին կայսրութեան գաւառներէն մէկը եղաւ։ Մեծն Կարոլոս հոս Պարչելոնայի կոմսութիւնը հաստատեց, որն որ երթալով զօրացաւ և Սիկիլիայ ու Սարդենիա կղզիներուն տիրելով Յունաստանի մէկ կտորն ալ Արևելեան կայսերաց ձեռքէն յափշտակեց. 1137ին Պարչելոնայի կոմսերը Արագոնիոյ ալ տիրելով Ար-